Արմինե Հովհաննիսյան

ՀՀ դպրոցական ցանցի արդյունավետություն

Հայաստանում դպրոցների համակարգն ունի որոշակի մարտահրավերներ. աշակերտների թիվը նվազում է, իսկ ուսուցիչների և դպրոցների թիվը մնում է նույնը՝ հանգեցնելով ցանցի արդյունավետության մի շարք ցուցանիշների վատթարացման: Թվային այս անհամապատասխանությունը ստեղծում է ոչ միայն ընդհանուր համակարգի ֆինանսական անարդյունավետություն, այլև հնարավորություն չի տալիս յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել որակյալ կրթություն լուծելով օրինակ լաբորատորիաների պակասի կամ ուսուցիչների բացակայության կամ մոտիվացիայի խնդիրը: Վերլուծելով հիմնական քանակական ցուցանիշները, ինչպիսիք են օրինակ աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը, ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը և այլն, ակնհայտ է դառնում Հայաստանում դպրոցական ցանցի արդյունավետության վերանայման և արդյունավետության բարձրացման նոր քաղաքականության մշակման անհրաժեշտությունը: Խնդիրն արդիական է ոչ միայն Հայաստանում այլև մի շարք ծնելիության մակարդակի անկում կամ զգալի չափերի հասնող ներքին ու արտաքին միգրացիա ունեցող երկներում, մասնավորաբար՝ հետխորհրդային երկրներում:

Առաջին հայացքից քանական խնդիրների այս համախումբը կարելի է լուծել և համակարգի արդյունավետությունը բարձրացնել քանակական վերլուծության հիման վրա քաղաքականություն մշակելով: Սակայն, ուսումնասիրելով ոլորտի առանձնահատկությունները, պարզ է դառնում, որ միայն քանակական վերլուծությամբ առաջնորդվելը թյուր է ու իրականում անարդյունավետ:

Կրթության և մասնավորաբար հանրակրթության ոլորտը պարփակում է գրեթե ամբողջ հասարակությունը. աշակերտներ, ուսուցիչներ, ծնողներ, ինչպես նաև անուղղակի շահառուներ: Քաղաքականություն մշակելիս կարևոր է հաշվի առնել ոլորտում ներգրավված բոլոր շահառուների կարիքներն ու գնահատել քաղաքականության հնարավոր ազդեցությունը վերջիններիցս յուրաքանչյուրի վրա: Խնդիրն էլ ավելի է բարդանում, երբ զուգորդվում ենք աշակերտների, դպրոցների և ուսուցիչների

աշխարհագրական սփռվածությամբ, դպրոցների շենքերի սեյսմիկ խոցելիությամբ և մի շարք այլ խնդիրների հետ: Ընդ որում խնդիրներն մակերեսային չեն, այլ բավականին խորն ու հրատապ: Օրինակ, սեյսմիկ կայունության խնդրի արդիականությունն ու ծավալը հասկանալու համար նշենք, որ դպրոցների ավելի քան 35 %-ը գնահատված է որպես խիստ խոցելի:

Արդյունավետության մասին խոսելիս բնական է, որ քանակական վերլուծությունը հիմնասյունն է մշակվելիք քաղաքականության: Սակայն, ինչպես նշվեց, ոլորտի զգայունությամբ պայմանավորված՝ արդյունավետության բարելավման ծրագիր մշակելիս կարևոր է քանակական վերլուծությունը համադրվել որակականի հետ: Օրինակ, դիտարկելով աշակերտների փոխադրումը որպես այլընտրանք պետք է հաշվի առնել լեռնային բնակավայրերի ճանապարհների անկատարությունն ու դժվար անցանելիությունը տարվա ցուրտ ամիսներին: Կամ սահմանելով դպրոցների ռացիոնալացման չափանիշներ կարևոր է նկատի ունենալ, որ սահմանամերձ բնակավայրերում դպրոցի փակումը կարող է հանգեցնել ամբողջ բնակավայրի գոյության դադարեցմանը: Դպրոցները փոքր բնակավայրերում ոչ միայն կրթական նշանակություն ունեն, այլև հանդիսանում են կարևոր համայնքային կենտրոն: Առանց այդ էլ անբարեկեցիկ և ռիսկային կյանքով ապրող բնակչության ու մանավանդ երիտասարդների համար մի փոքր հավելյալ դրդապատճառն անգամ կարող է դառնալ վերջին կետը բնակավայրից արտագաղթելու, իսկ համայնքային կենտրոնի փակումն առավել ևս:

Կարևոր է նաև քաղաքականության հիմքում եղած չափանիշների հիմնավոր և արդարացի լինելը: Ռացիոնալացման ենթակա դպրոցները պետք է ստանան հստակ ու օբյեկտիվ բացատրություն, թե ինչու են հենց իրենք համարվում առավել անարդյունավետ: Հետևաբար չափանիշ մշակելիս պետք է հիմնվել հաշվելի և քանակական հիմնավորումների վրա, քանզի որակական հիմնավորումների օբյեկտիվությունն ավելի հեշտ է հարցականի տակ դնել: նպատակահարմար կարող է օգտվել մաթեմատիկական մոդելավորման և քանակական վերլուծության հիմնական գործիքներից օգտվելը:

Քաղաքականություն մշակելիս կարևոր է տարբերակել քաղաքային և գյուղական համայնքների դպրոցական համակարգերի խնդիրների առանձնահատկությունները: Եթե քաղաքային դպրոցների համար կարելի է մեկ եզակի ծրագրով հանդես գալ, գյուղական դպրոցների դեպքում քաղաքականությունը պետք է լինի շատ ավելի ճկուն և պետք է նախատեսի տարբեր սցենարներ տարբեր դպրոցների խմբերի համար՝ պայմանավորված գյուղական դպրոցների խնդիրների բազմազան և բազմաբնույթ լինելով: Համառոտ փորձեմ ներկայացնել հիմնական խնդիրներից մի քանիսն ու դրանց հնարավոր լուծումները:

1. Դպրոցներում աշակերտների փոքր թիվ: Հայաստանում կան դպրոցներ, որտեղ ուսանում է 2 աշակերտ: Ավելին, թվով 33 դպրոց ունի 2-10 աշակերտ: Իսկ մեկ աշակերտի ֆինանսավորումը 79 դպրոցում գերազանցում է մեկ մլն ՀՀ դրամը:
2. Գյուղական դպրոցներից շատերում չկան մասնագիտացված ուսուցիչներ: Դպրոցներից 25-ում ուսուցիչների քանակը կազմում է 1-5:

Պարզ է, որ ներկայացված քանակական անարդյունավետությունը զուգորդված է բովանդակային անարդյունավետությամբ. դպրոցը հանդիսանում է ոչ միայն աշակերտների գիտելիք ստանալու, քննադատական ու վերլուծական մտածողություն զարգացնելու, այլև որպես հասարակության գիտակից ու ակտիվ անդամ ձևավորելու կենտրոն: Փոքրաթիվ աշակերտներով դպրոցներում սովորողները զուրկ են մնում այլ աշակերտների հետ շփման և մեկը մյուսից սովորելու հնարավորությունից, ինչն էլ վերջին ժամանակների ուսումնասիրությունների համաձայն, առավել արդյունավետ կարող է լինել, քան ուսուցիչների կողմից բացատրվածն ու մեկնաբանվածը:

Խնդիրների մյուս խումբը կապված է դպրոցների անադյունավետ բեռնվածության հետ՝ դպրոցական շենքերի նախագծային հնարավորության տեսանկյունից: Հայաստանի դպրոցների մոտավորապես 30%-ը թերբեռնված է, և ևս 30%-ը գերբեռնված է: Սա էլ իր հերթին հանգեցնում է մի շարք խնդիրների, ինչպիսիք են դասարաններում աշակերտների չափազանց մեծ քանակը, դպրոցներում երկրորդ, և նույնիսկ երրորդ հերթերի առկայությունը և այլն: Կարելի է ենթադրել, որ տարածքների վերաբաշխումով խնդիրները կլուծվեն՝ գերբեռնված դպրոցները կստանան հավելյալ տարածք, թերբեռնվածներից անպիտան տարածքները կօտարվեն: Սակայն, բացի ազատ ու

անհրաժեշտ տարածքերի ծավալային ու տարածքային անհամամասնականությունից, կարևոր խնդիր է նաև հետագայում նման խնդրի առաջացման կանխումը: Սա ապահովելու կարևոր քայլերից է կարգերի հստակ մշակումն ու դրանց պահպանման նկատմամբ հետևողական լինելը: Կարևոր գործիք է նաև աշակերտների դպրոց ընդունման էլեկտրոնային համակարգի ներդրումը, որը կմինիմալացնի նաև կոռուպցիոն ռիսկերը:

Վերջում նորից կուզեի անդրադառնալ խնդրի սոցիալական բաղադրիչին: Ինչպես ցույց են տալիս մի շարք միջազգային հետազոտություններ (Էստոնիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան, ԱՄՆ և այլն), կարևոր է քաղաքականությունը այնպես մշակել, որ առաջացած սոցիալական խնդիրներն իրենց արժեքով չգերակշռեն ֆինանսական արդյունավետությունը. ուսուցիչների աշխատանք կորցնելը, աշակերտների դպրոց փոխելու և առավել ևս օրական դպրոց հասնելու համար ստիպված լինելը կիլոմետրեր անցնել, բնակավայրերի գոյության դադարեցումը անուղղակիորեն հանգեցնում են ավելի մեծ կորուստների, ինչպիսիք են օրինակ սոցիալան բեռը, միգրացիան և այլն: